Արձանագրություն թիվ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28 փետրվարի 2018թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-18 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
   /զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2017-18 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:
   /զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ամբիոնի վարիչների տարեկան հաշվետվության ներկայացում:
   /զեկ. Հ.Մ. Ասատրյան, Մ.Վ.Հարությունյան /
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված է երեք հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա մանրամասն ներկայացրեց քննություններից հետո , այնուհետև առաջին լուծարքային և երկրորդ լուծարքային շրջանից հետո գնահատման արդյունքները /ուսանողների գնահատման ամփոփ տվյալները կցվում է արձանագրությանը/ և ցուցաբերած առաջադիմությունը՝ ըստ մասնագիտությունների, կուրսերի և ուսման կարգավիճակների: Մասնավորապես նշվեց, որ ֆակուլտետի թվով 68 ուսանողներ ստուգարքներից և քննություններից հետո բոլոր կուրսերում ունեցել են ակադեմիական պարտքեր: Նրանցից առավել մեծ թիվ են կազմում „Դիզայն'' մասնագիտության առաջին կուրսի 22 ուսանողներից 11-ը ունեցել են ակադեմիական պարտքեր: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը 2017-18 ուստարվ առաջին լուծարքայունկիսամյակի քննաշրջանից հետո կազմում է 88,9%, առաջին լուծարքային շրջանից հետո 93,7%, իսկ երկրորդից հետո 98,5%: Կիրառական արվեստ մասնագիտության երրորդ կուրսի ուսանող ՝ Տիգրան Խաչատրյանը կուտակեց երկու ակադեմիական պարտք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Ասատրյանը, Ա.Չիբուխչյանը: Նրանք մտահոգություն հայտնեցին վերոհիշյալ ուսանողների ոչ պատշաճ վերաբերմունքի և մասնագիտական ցածր որակների դրսևորման վերաբերյալ և առաջարկեցին լրացուցիչ պարապմունքների միջոցով շտկել ստեղծված իրավիճակը:

ՈՐՈՇԵՑԻՆ — Հանձնարարել ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի ,, ամբիոնի վարիչ Հ.Ասատրյանին վերոնշյալ ուսանողների հետ կցել ամբիոնի փորձառու դասախոս և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ նրանց մասնագիտական որակների բարձրացման և անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2017-18թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը, „Կիրառական արվեստ'' մասնագիտության չորրորդ կուսի քննաշրջանի գրաֆիկը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում, որի արդյունքում հաշվի են առնվել նրանց կարծիքներ ևս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս.Հովհաննիսյանը, Ք.Մխիթարյանը,Դ.Չիբուխչյանը: Նրանք ի գիտություն ընդունեցին ներկայացված ժամանակացույցը, քննաշրջանի գրաֆիկը և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2017-18թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և գրաֆիկը ներկայացնել տնօրենություն հաստատելու համար:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկան ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի,, ամբիոնի վարիչի ժ/պ Հ.Ասատրյանը և ,,Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի''ամբիոնի ժ/պ Մ.Հարությունյանը:

Հ.Ասատրյանը և Մ. Հարությունյանը մասնավորապես նշեցին, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի ,, և ,,Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի'' ամբիոնները ուղղորդվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով և 2017-2018թթ. ուստարում իրականացվել է հետևյալ միջոցառումները՝

1. Քննարկվել և հաստատվել են ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի ,, և ,,Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի'' ամբիոնների 2017-2018թթ. ուստարվա աշխատանքային պլանները և դասավանդվող առարկայական ծրագրերը, ինչպես նաև գծանկարչություն, գունանկարչություն և քանդակագործություն առարկայական բոլոր մոդուլների ընթացիկ,եզրափակիչ և հանրագումարային քննությունների գնահատման կարգերը:
2. Ամբիոնների գրեթե բոլոր դասախոսները կազմել և ներկայացրել հաստատման իրենց կողմից դասավանդվող առարկայական փաթեթները / պորտֆոլիո/:
3. Քննարկվել են 2017-2018թթ. ուստարվա դասախոսների անհատական զարգացման աշխատանքային պլանները:
4. Հաստատվել են դասախոսների ուսանողների հետ հանդիպման ժամանակացույցերը:
5. Քննարկվել և հաստատվել են 2017-18ուստարվա ավարտական աշխատանքների / թվով 18/ թեմաները:
6. Քննարկվել և հաստատվել են 2017-18 ուստարվա կուրսային աշխատանքների թեմաները:
7. Կազմվել և հաստատվել են IV կուրսի ուսանողների և ղեկավարների հանդիպման գրաֆիկները:
8. Քննարկվել և հաստատվել են 2017-18ուստարվա երկրորդ կիսամյակի դասալսումների ժամանակացույցը:
9. Ամբիոնները ապահովել է ամբիոնների առաջատար մասնագետների մասնակցությունը մարզի դպրոցներում կազմակերպվող մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործընթացին:

10. Կազմակերպվել են 2017-18թթ. ուստարվա առաջին կիսամյակի մասնագիտական դասընթացների ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների քննարկում և քննաշրջանի ամփոփումը:
11. Ամբիոնները հանրությանը անհրաժեշտ լրատվություն են տրամադրել մասնաճյուղի ինտերնետային կայքին, կատարել են բուկլետների ձևավորում՝ ֆակուլտետի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ:
12. Ամբիոնները ապահովել է ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և կատարելագործման միջոցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.Մարգարյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Չիբուխչյանը:Նրանք համակարծիք էին զեկուցողների հետ և առաջարկեցին վերջիններիս կատարած աշխատանքները գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ – „Գծանկարի, գունանկարի և քանդակի ,, և „Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի'' ամբիոնների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ Ա.Մարգարյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների վիճակը և նշեց, որ բոլոր ուսանողները ավարտել են առաջին փուլը `էսքիզների վերջնական տարբերակները , որոնք հավանության են արժանացել ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների կողմից և անցել հաջորդ՝ նյութերի հայթայթման և կատարման տեխնիկական փուլին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ—Հ.Ասատրյանը,Ս.Հովհաննիսյանը,Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը,Ա.Չիբուխչյանը և կարևորեցին ավարտական աշխատանքների որակական կողմը, որի համար անհրաժեշտ են ձեռք բերել նյութեր:

ՈՐՈՇԵՑԻՆ- Երկշաբաթյա ժամանակամիջոցում ֆակուլտետի դեկանին ներկայացնել ավարտական աշխատանքների կատարման համար պահանջվող նյութերի ցանկը:

ՆԱԽԱԳԱՀ	Ա. Շ.Մարգարյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Ք.Հ.Մխիթարյան